ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/324

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

ՀՀ պետական պահպանության ծառայության ներկայացուցիչներ՝

Ա. Մուրադյանի (լիազորագիր՝ տրված 21.12.2021թ.),

Կ. Գասպարյանի (լիազորագիր՝ տրված 21.12.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.12.2021թ. թիվ 26/26-1/20517-2021 գրությամբ «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական պահպանության ծառայության 06.12.2021թ. թիվ 19/2163 գրության հիման վրա, 14.12.2021թ. թիվ 26/26-1/20517-2021

գրությամբ նախաձեռնել է «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/324 ընթացակարգի շրջանակներում 22.12.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պետական պահպանության ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական պահպանության ծառայությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.12.2021թ. թիվ 19/2163 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Պետական պահպանության ծառայության կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման և պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՊՊԾ-ԳՀԱՇՁԲ-1/2021-17 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 17.08.2021թ. կնքված ՊՊԾ-ԳՀԱՇՁԲ-1/2021-17-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև կատարող) էականորեն խախտել է պայմանագիրը.

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N1 հավելվածով սահմանված պահանջներին (1-ին չափաբաժնով նախատեսված աշխատանքները մի մասով չեն կատարվել, ինչպես նաև կատարված աշխատանքներում արձանագրվել են թերություններ),

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը (ըստ պայմանագրի և դրա անբաժանելի մասը կազմող համաձայնագրի համաձայն՝ աշխատանքների կատարման

վերջնաժամկետ է է սահմանվել 15.10.2021թ.):

Կատարողին տրվել է ողջամիտ ժամկետ պայանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար, սակայն վերջինիս կողմից որևէ քայլեր չեն ձեռնարկվել:

Կատարողի կողմից պայմանագրի 1.1 և 1.2 կետերով ստանձնված պարտավորությունների խախտմամբ պայմանավորված՝ Պետական պահպանության ծառայությունը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածը, 345-րդ հոդվածի 1-ին մասո և 466-րդ հոդվածի 3-րդ մասը, ղեկավարվելով 17.08.2021թ. կնքված ՊՊԾ-ԳՀԱՇՁԲ-1/2021-17-1 պայմանագրի 2.1.3 կետով միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Այսպիսով՝ «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ն կատարել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով սահմանված խախտումը (ա. Խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի մասնակի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը):

Կից ներկայացնում ենք պայմանագրի կատարման գործընթացի փաստաթղթերի պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/324 ընթացակարգի շրջանակներում 22.12.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են վերը շարադրված դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/324 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/324 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն

հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական պահպանության ծառայության և «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի միջև 17.08.2021թ. կնքվել է թիվ «ՊՊԾ-ԳՀԱՇՁԲ-1/2021-17-1» ծածկագրով պետության կարիքների համար աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել Պայմանագրի կնքման պահից մինչև 30.09.2021թ.:

3. Պայմանագրի շրջանակներում ՀՀ պետական պահպանության ծառայության և «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի միջև 28.09.2021թ. կնքվել է Համաձայնագիր N 1, որով աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 15.10.2021թ.:

4. ՀՀ պետական պահպանության ծառայությունը «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ին ուղղված 23.11.2021թ. թիվ 19/2069 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Պետական պահպանության ծառայության և «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի միջև 17.08.2021թ. N ՊՊԾ-ԳՀԱՇՁԲ-1/2021-17-1 ծածկագրով կնքված ՊՊԾ կարիքների համար աշխատանքների կատարման պայմանագրի շրջանակներում՝ Ձեր կազմակերպությունը ստանձնել է շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքները, որի կատարման վերջնաժամկետը լրացել է սույն թվականի հոկտեմբերի 15-ին, սակայն մինչև ս.թ. նոյեմբերի 10-ի դրությամբ աշխատանքները կատարվել են մասնակի:

Առաջարկում ենք պայմանագրի տեխնիկական բնութագրի 1-ին չափաբաժնով նախատեսված աշխատանքների ամբողջ ծավալը ավարտել մինչև սույն թվականի նոյմեբերի 26-ը, այլապես կձեռնարկվեն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցներ»:

5. ՀՀ պետական պահպանության ծառայությունը «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ին ուղղված 02.12.2021թ. թիվ 19/2148 ծանուցմամբ, հայտնել է հետևյալը.

«Պետական պահպանության ծառայության և «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի միջև 17.08.2021թ. կնքվել է ՊՊԾ-ԳՀԱՇՁԲ-1/2021-17-1 ծածկագրով պայմանագիր, որի 1.1 և 1.2 կետերի համաձայն՝

Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի կատարման վերջնաժամկետը համաձայն պայմանագրի N 1 հավելվածի, սահմանվել է մինչև 2021թ. սեպտեմբերի 30-ը, որը երկարաձգվել է 2021 թվականի սեպտեմբերի 28-ին կնքված պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 համաձայնագրով և սահմանվել մինչև 2021 թվականի հոկտմեբերի 15-ը:

Տեղեկացնում ենք, որ պայմանագրի կատարման ժամկետը ավարտվել է, սակայն «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի կողմից աշխատանքները մի մասով չեն կատարվել, ինչպես նաև կատարված աշխատանքներում արձանագրվել են թերություններ: Չկատարված և թերակատարված աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է 546202 (հինգ հարյուր քառասունվեց հազար երկու հարյուր երկու դրամ) ՀՀ դրամ:

Պետական պահպանության ծառայության 23.11.2021թ. N 19/2069 գրությամբ «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ին առաջարկվել է պայմանագրի տեխնիկական բնութագրի 1-ին չափաբաժնով նախատեսված աշխատանքների ամբողջ ծավալը ավարտել մինչև ս.թ. նոյեմբերի 26-ը և տեղեկացվել է, որ այլապես կձեռնարկվեն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցներ:

Պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված աշխատանքների մի մասը «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի կողմից կատարվել է 2021 թվականի հոկտեմբերի 15-ից հետո մինչև 2021 թվականի նոյեմբերի 10-ը, այսինքն՝ պայմանագրի կատարման ժամկետի ավարտից

հետո, որի համար վերջինիս նկատմամբ հաշվարկվել և կիրառվել է տույժ: Ս.թ. նոյեմբերի 10-ից հետո «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի կողմից որևէ աշխատանք չի կատարվել:

«Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի 1.1 և 1.2 կետերով ստանձնված պարտավորությունների խախտմամբ պայմանավորված՝ Պետական պահպանության ծառայությունը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածը, 345-րդ հոդվածի 1-ին մասո և 466-րդ հոդվածի 3-րդ մասը, ղեկավարվելով 17.08.2021թ. կնքված ՊՊԾ-ԳՀԱՇՁԲ-1/2021-17-1 պայմանագրի 2.1.3 կետով միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները (…)»:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 02.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.12.2021թ. թիվ 26/26-1/20517-2021 գրությունը, ՀՀ պետական պահպանության ծառայության 06.12.2021թ. թիվ 19/2163 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և

ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պետական պահպանության ծառայության և «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի միջև 17.08.2021թ. կնքվել է թիվ «ՊՊԾ-ԳՀԱՇՁԲ-1/2021-17-1» ծածկագրով պետության կարիքների համար աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման պարտավորությունը

(այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել Պայմանագրի կնքման պահից մինչև 30.09.2021թ.:

Պայմանագրի շրջանակներում ՀՀ պետական պահպանության ծառայության և «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի միջև 28.09.2021թ. կնքվել է Համաձայնագիր N 1, որով աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 15.10.2021թ.:

ՀՀ պետական պահպանության ծառայությունը «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ին ուղղված 23.11.2021թ. թիվ 19/2069 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Պետական պահպանության ծառայության և «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի միջև 17.08.2021թ. N ՊՊԾ-ԳՀԱՇՁԲ-1/2021-17-1 ծածկագրով կնքված ՊՊԾ կարիքների համար աշխատանքների կատարման պայմանագրի շրջանակներում՝ Ձեր կազմակերպությունը ստանձնել է շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքները, որի կատարման վերջնաժամկետը լրացել է սույն թվականի հոկտեմբերի 15-ին, սակայն մինչև ս.թ. նոյեմբերի 10-ի դրությամբ աշխատանքները կատարվել են մասնակի:

Առաջարկում ենք պայմանագրի տեխնիկական բնութագրի 1-ին չափաբաժնով նախատեսված աշխատանքների ամբողջ ծավալը ավարտել մինչև սույն թվականի նոյմեբերի 26-ը, այլապես կձեռնարկվեն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցներ»:

ՀՀ պետական պահպանության ծառայությունը «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ին ուղղված 02.12.2021թ. թիվ 19/2148 ծանուցմամբ, հայտնել է հետևյալը.

«Պետական պահպանության ծառայության և «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի միջև 17.08.2021թ. կնքվել է ՊՊԾ-ԳՀԱՇՁԲ-1/2021-17-1 ծածկագրով պայմանագիր, որի 1.1 և 1.2 կետերի համաձայն՝

Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման պարտավորությունը

(այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի կատարման վերջնաժամկետը համաձայն պայմանագրի N 1 հավելվածի, սահմանվել է մինչև 2021թ. սեպտեմբերի 30-ը, որը երկարաձգվել է 2021 թվականի սեպտեմբերի 28-ին կնքված պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 համաձայնագրով և սահմանվել մինչև 2021 թվականի հոկտմեբերի 15-ը:

Տեղեկացնում ենք, որ պայմանագրի կատարման ժամկետը ավարտվել է, սակայն «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի կողմից աշխատանքները մի մասով չեն կատարվել, ինչպես նաև կատարված աշխատանքներում արձանագրվել են թերություններ: Չկատարված և թերակատարված աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է 546202 (հինգ հարյուր քառասունվեց հազար երկու հարյուր երկու դրամ) ՀՀ դրամ:

Պետական պահպանության ծառայության 23.11.2021թ. N 19/2069 գրությամբ «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ին առաջարկվել է պայմանագրի տեխնիկական բնութագրի 1-ին չափաբաժնով նախատեսված աշխատանքների ամբողջ ծավալը ավարտել մինչև ս.թ. նոյեմբերի 26-ը և տեղեկացվել է, որ այլապես կձեռնարկվեն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցներ:

Պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված աշխատանքների մի մասը «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի կողմից կատարվել է 2021 թվականի հոկտեմբերի 15-ից հետո մինչև 2021 թվականի նոյեմբերի 10-ը, այսինքն՝ պայմանագրի կատարման ժամկետի ավարտից հետո, որի համար վերջինիս նկատմամբ հաշվարկվել և կիրառվել է տույժ: Ս.թ. նոյեմբերի 10-ից հետո «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի կողմից որևէ աշխատանք չի կատարվել:

«Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի 1.1 և 1.2 կետերով ստանձնված պարտավորությունների խախտմամբ պայմանավորված՝ Պետական պահպանության ծառայությունը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածը, 345-րդ հոդվածի 1-ին մասո և 466-րդ հոդվածի 3-րդ մասը, ղեկավարվելով 17.08.2021թ. կնքված ՊՊԾ-ԳՀԱՇՁԲ-1/2021-17-1 պայմանագրի 2.1.3 կետով միակողմանի մասնակի

լուծել է պայմանագիրը և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 02.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Պայմանագրի 5.6 կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ արձանագրում եմ, որ «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ պետական պահպանության ծառայության միջև 17.08.2021թ. կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.12.2021թ. թիվ 26/26-1/20517-2021 գրությամբ «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**